

Շնորհալին կը յիշեցնէ՝ թէ այս մատաղէն եւս բաժին պիտի հանուէր քահանայից տան համար, հարկաւ այն սահմանին համեմատ՝ զոր մանրամասնօրէն տեսանք նախնարար (335), եւ միւսը՝ կ'ըսէ՝ աղքատաց ու կարօտելոց բաշխել «առանց ակնառութեան», որպէս զի Աստուծոյ հաճոյ լինի (Ընդհ. 160): Բացատրութիւնս «առանց ակնառութեան» ցոյց կու տայ, թէ ինչպէս սրբավայրին մէջ անգամ սպրդած էր խտրական ոգին՝ զոր նկատեցինք առտնին ազապներու մէջ (աստ, 321):



## Գ. ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

1. — Կոչումն ու սահման: — Ննջեցեալ հոգւոց հանգստեան համար տրուած ազապն է այս, որոյ ամենէն աւելի յայտարար անունն էր հոգեհանգիստը: Ասոր կը պատահինք նոյն ինքն Մաշտոցին մէջ, սկսեալ ՔԱ դարու օրինակէն, յորում կը կարգանք. «Կանոն ոգեհանգիստ առնելոյ կամ յիշատակ մեռելոյ», եւ ըստ 1345ի